

**Մհեր Հարությունյան
պատմ. գիտությունների թեկնածու, դոցենտ**

ՎԵՐՍՏԻՆ ՇՈՒՇԻՒ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԻ ՇՈՒՐՋ*

Նորագույն շրջանի պատմագրությունը մեր հանրապետության տեղեկության անվտանգության բաղկացուցիչ մասն է: Շուշիի ազատագրման պատմագրության հիմնահարցերի ուսումնասիրությունը և հանրահռչակումը հրատապ են ինչպես այդ կարևոր իրադարձության ճշգրիտ ու համակողմանի ներկայացման, այնպես էլ կեղծարարների ոտնձգություններին հակադարձելու առումներով:

Թեմային վերստին անդրադառնալու նպատակն է նախորդ ուսումնասիրությունների և հեղինակների տեսակետների քննական վերլուծության հիման վրա վերհանել Շուշիի պատմագրության հիմնահարցերը և նպաստել այդ կարևոր իրադարձության վերաբերյալ օբյեկտիվ ճշմարտության հայտնաբերմանը ու համաշխարհային գիտական համակարգի մեջ դրա ինտեգրմանը:

Խնդիր ենք ունեցել ընդհանրացնելու Շուշիի ազատագրման պատմագրության հիմնահարցերի մշտապես ու նպատակասլաց կերպով կատարված ճշգրտումների կամ վերագնահատումների արդյունքները, ինչպես նաև պատեհաժամորեն կանխելու նախկին թերությունների ու վրիպակների հետագա վերարտադրությունը և նոր հրատարակություններում դրանց անցանկալի շրջանառությունը:

Բանալի բառեր՝ Շուշիի ազատագրում, ռազմագործողություն, պատմագրություն, պատմության կեղծարարներ, Ստեփանակերտ, հումանիտար աղետ, նախահարձակում, անվտանգություն, սպառնալիք, քաղաքական չափում

**Mher Harutyunyan,
PhD of Historical Sciences, Docent**

ROUND AGAIN THE MAIN ISSUES OF SHUSHI LIBERATION HISTORIOGRAPHY

The historiography of new period is the component of the informational security of our republic. The research and declaration of Shushi liberation historiography are urgent as for the correct and full presentation of that important event, for the purposes of contrasting those trespassing of duffers as well.

The aim of touching upon the theme once more is to reveal the main issues of Shushi liberation on the basis of previous researches and analyzing previous authors' points of views on the topic and support the revelation of the objective truth of those important events and including them in the international scientific system.

We had the task to summarize the results of aimed and permanent clarifications round the main issues of Shushi liberation and the right time prevention of repeating the previous mistakes and releases and their further undesirable circulations in new publications.

Keywords: Shushi liberation, history duffers, military operations, Stepanakert, humanitarian disaster, aggression, security, threat, political measurement.

**Мгер Арутюнян,
кандидат исторических наук, доцент**

И ВНОВЬ ОБ ОСНОВНЫХ ВОПРОСАХ ИСТОРИОГРАФИИ ОСВОБОЖДЕНИЯ ШУШИ

Историография новейшего периода является составной частью информационной безопасности республики Арцах. Изучение и обнародование основных вопросов историографии освобождения Шуши актуально как для научного и всестороннего представления этого важного события, так и в целях борьбы с посягательствами фальсификаторов.

* Հետազոտությունն իրականացվել է ԼՂՀ ԿԳՄ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 16.10-007 գիտական թեմայի շրջանակներում:

Новое осмысление темы позволяет автору на основе критического анализа предыдущих исследований и авторских позиций определить основные вопросы историографии освобождения Шуши и способствовать выявлению объективной истины по этому важному событию и его интеграции в мировую научную систему.

Итогом исследования стало обобщение, уточнение и переоценка основных положений по историографии освобождения Шуши, а также предотвратить дальнейшее воспроизводство прежних недочетов и ошибок и их нежелательное включение в научный оборот в новых изданиях.

Ключевые слова: историография, освобождение Шуши, фальсификаторы истории, военная операция, Степанакерт, гуманитарная катастрофа, агрессия, безопасность, угроза, политическое измерение.

Հայոց պատմության նորագույն շրջանի պատմագրությունն, անկասկած, մեր հանրապետության տեղեկության անվտանգության բաղկացուցիչ մասն է: Ազգային ազատագրական պայքարի նորոյա շրջանի կարևոր իրադարձություններից է Շուշի քաղաքի և մայրաքաղաքի շրջական կրակակետերի վնասագերծման ռազմագործողությունը: Ուստի, Շուշիի ազատագրման պատմագրության հիմնահարցերի ուսումնասիրությունը և հանրահռչակումը հրատապ են ինչպես այդ կարևոր իրադարձության ճշգրիտ ու համակողմանի ներկայացման, այնպես էլ արտաքին ու ներքին կեղծարարների ոտնձգություններին հակադարձելու առումներով: Եթե հինավուրց Շուշի բերդաքաղաքի ազատագրման 25-ամյա հոբելյանը հայ ազգի համար այդ փառավոր հաղթանակը կերտողների հանդեպ հպարտության ու երախտագիտության զգացումների ուժեղացման աղբյուր է, ապա մեր հակառակորդների համար սոսկ ոչ հեռու անցյալի իրադարձություններն անընդհատ նենգափոխելու, մեր համազգային նվաճումների, հատկապես՝ Շուշի ազատագրման վրա սովեր գցելու հերթական առիթն է:

Խնդրո առարկա թեմային վերստին անդրադառնալու նպատակն է նախորդ ուսումնասիրությունների և հեղինակների տեսակետների քննական վերլուծության հիման վրա վերհանել Շուշիի պատմագրության հիմնահարցերը և նպաստել այդ կարևոր իրադարձության վերաբերյալ օբյեկտիվ ճշմարտության հայտնաբերմանը կամ հաստատմանը, ինչպես նաև համաշխարհային գիտական համակարգի մեջ դրա ինտեգրմանը: Հատկապես վերջին հանգամանքը ենթադրում է կուտակված գիտական գիտելիքների հիման վրա կատարված ուսումնասիրությունների արդյունքները մենագրությունների կամ այլ ձևի աշխատությունների տեսքով նաև օտար լեզուներով հրատարակում և տարածում արտասահմանյան ուսումնագիտական հաստատություններում, ուղեղային կենտրոններում: Այդ կարգի գիտական գիտելիքների տարածման լավագույն հարթակ կարող են լինել արհեստավարժորեն պատրաստված ու մասնագիտացված կայքերը, անսահմանափակ հասանելիություն ունեցող թվայնացված գրադարաններն ու համացանցային այլ պաշարները:

Սույն հոդվածով խնդիր ենք ունեցել ընդհանրացնելու Շուշիի ազատագրման պատմագրության հիմնահարցերի մշտապես ու նպատակասլաց կերպով կատարված ճշգրտումների կամ վերագնահատումների արդյունքները, ինչպես նաև պատեհաժամորեն կանխելու նախկին թերությունների ու վրիպակների հետագա վերարտադրությունը և նոր հրատարակություններում դրանց անցանկալի շրջանառությունը:

Ընդհանրապես Շուշիի, այդ թվում՝ այդ բերդաքաղաքի ազատագրման պատմագրության հիմնահարցերին անդրադարձել ենք տարբեր առիթներով, ներկայացրել մեր ուսումնասիրությունների արդյունքները¹: Ժամանակին քննադատել ենք նաև ադրբեջանական կեղծարարությունները², ուստի այստեղ այդ թեմային նորից անդրադառնալը նպատակահարմար չէ,

¹ **Հարությունյան Մ.**, Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, 176 էջ, **Նույնի**, Շուշիի ազատագրման պատմագրության հիմնահարցերը.- «Միջազգային գիտաժողով՝ նվիրված «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի 10-ամյա գործունեությանն ու Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին». զեկուցումների հիմնադրույթներ, Ստ., 2007, էջ 11-14, **Նույնի**, Հայաստան-Արցախ. պատմության և արդիականության զուգահեռներում (հոդվածների ժողովածու), գիրք Ա, Ստ., «Դիզակ պլյուս», 2009, էջ 127-164, **Նույնի**, Վերստին Շուշիի ազատագրման պատմագրության հիմնահարցերի մասին (Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձի առթիվ).- «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 1, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2008, էջ 144-150 և այլն:

² **Հարությունյան Մ. Ա.**, Շուշիում կոտորվեց Ադրբեջանի ռազմական մեքենայի ողնաշարը.- «Մարտիկ», հմ. 20, 8 – 10 մայիս, 2004 թ., էջ 6, **Арутюнян М. А.**, О некоторых вопросах историографии освобождения города Шуши и

քանի որ կեղծարարների զինանոցի, փաստարկների ու մոլորեցնող պնդումների բառապաշարը աղքատիկ է և նրանք անընդհատ շրջանառում են նույն ստերը: Դա արվում է քարոզչական և կեղծիքները հանրահռչակելու անթաքույց նպատակներով, հետևաբար՝ աղբրեջանական նենգափոխումների շուրջ անիմաստ խոսքուկովի բռնվելը միայն նպաստելու է աղբրեջանցիների՝ իրենց հետապնդած նպատակին հասնելուն:

Աղբրեջանական կեղծարարությունը մերկացրել են նաև այլ հեղինակներ¹: Հատկանշելի է, որ վերոնշյալ տեսակետից երիցս կարևորվում են հայ պատմագրության մեջ Շուշիի ազատագրման պատմագրության մեթոդաբանական գործիքակազմի ուրվանշումը, հիմնահարցերի քննական վերլուծությունը, որի արդյունքները հնարավորություն կտան ավելի արգասավոր կերպով որոնել ու գտնել պատմական ճշմարտությունը, ապա նաև ապահովել նրա հաստատուն տեղը համաշխարհային գիտական համակարգում: Այս նկատառումներից ելնելով՝ սույն հոդվածում քննության ենք առել միայն հայ պատմագրության հիմնահարցերի, մեր կարծիքով, ավելի կարևոր մասը:

Պատմական նշանակություն ունեցած ռազմական այդ հաղթանակին անդրադառնալիս հարկ է անպայման հիմնավորել Շուշիի ազատագրման անհրաժեշտությունը: Ընդամին, դա պետք է դիտարկել հետևյալ չափումներում.

ա) Շուշիի ազատագրման անհրաժեշտության պատմական չափումը: Դա ենթադրում է հայոց պատմության, մասնավորապես՝ Արցախի հերոսական անցյալի հոլովոյթում Շուշիի տեղի ու դերի արժեքավորումը, համակողմանի ներկայացումն ու հանրահռչակումը²:

становления Армии Обороны.- «Салют, Победа!», Сборник научных трудов IV Всероссийской научно-практической военно-исторической конференции с международным участием.- Томск, Изд-во Томского политехнического университета, 2014, с. 263-271.

¹ **Հակոբյան Հ. Ա.**, Խոջալուի և Շուշիի ազատագրումը աղբրեջանական պատմագրության լուսաբանմամբ (1992 թ. փետրվար-մայիս).- «ԼՀԳ», հմ. 3, 2008, էջ 80-86, **Դավթյան Ա. Մ., Ավանեսյան Ս. Ա.**, Շուշիի ազատագրումը և դրա պատմական նշանակությունը.- «Հայկական բանակ», հմ. 1-2, 2012, էջ 26-42:

² Այս առումով զգալի աշխատանք է կատարվել տես **Խանդավազյան Բ., Հարությունյան Ս.**, Էջեր Շուշիի հայ թատրոնի անցյալից (1891-1905), Երևան, Հայկական թատերական ընկերություն, 1978, **Սկյան, Վ.**, Շուշի (Պատմական ակնարկ), խմբ.՝ Չոբանյան Պ. Ա.; Համբարյան Ա. Ս., Երևան, Հայաստան, 1991, Շուշի: Մշակութային կյանքի մեկ դարը 1820-1920 [Պատմական համառոտ ակնարկ: Բուկլետ], Երևան, Գրականության և արվեստի թանգարանի հրատարակություն, 1992, **Տեր-Պատմարյան Ռ.**, Շուշի քաղաք, Երևան, ԳԱ հրատ., 1993, **Մկրտչյան Ս., Դավթյան Ս.**, Մուսի. город трагической судьбы, Ереван, 1997, **Վարապետյան Բ.**, Շուշի բերդաքաղաքը (Պատմությունը մինչև 1920թ.), խմբ.՝ Ուլուբարյան Բ. Ա.; Խուրշուդյան Լ. Ա., Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2000, **Գրիգորյան Հ., Հարությունյան Գ.**, Շուշիի ռեալականը, Երևան, Ամարաս, 2001, Շուշի. ոգու քաղաքը: Ազատության 10 տարի, կազմ.՝ Իսրայելյան Վ., Դիլանյան Ս., Մարիկյան Գ., ՀՀ ՊՆ Լրատվության և քարոզչության վարչություն, Երևան, Ա. հ., 2002, **Դաբադյան Ա., Գաբրիելյան Ս.**, Շուշին 1992-2002 թթ.: Հայերի վերադարձը ազատագրված քաղաք (Ազգագրական ակնարկ), խմբ.՝ Հոբոսյան Ս. Գ., ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա; Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, Ա. հ., 2004, **Խաչատրյան Ա., Հարությունյան Գ.**, Շուշիի մանկավարժական ուսումնարան. 1921-2006թթ., Ստեփանակերտ, Սոնա, 2006, **Սարգսյան Ս., Մխիթարյան Ս., Հարությունյան Ս.**, Շուշի, Երևան, Անտարես, 2007, **Վարդումյան Հ.**, Շուշիի ազատագրումը: Վավերագրություն, Երևան, Տոներ, 2007, **Շուշին հայոց քաղաքակրթության օրրան: Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր [Հայաստանի հանրապետության կրթության և գիտության նախարարություն; Երևանի պետական համալսարան; ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարություն; Արցախի պետական համալսարան; Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ]**, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, **Մկրտչյան Շ., Դավթյան Շ.**, Շուշի: Ողբերգական ճակատագրի քաղաքը, Երևան, Գասպրինտ, 2008, «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 4(47-58), Աղբրեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2010, «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք), «Կաճառ», Գիրք 2(23-34), 2008, Факты о политике этнической чистки и государственного террора в отношении армян, проводимой властями Азербайджанской ССР в конце 80-х – начале 90-х годов XX века. Свидетельства очевидцев о преступлениях, совершенных азербайджанцами в отношении мирного армянского населения г. Шуши (документы и материалы).- Состав., отв. ред., авт. вступ. статьи: М. А. Арутюнян, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2014, «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք), «Կաճառ», Գիրք 6(71-82), 2012, Շուշին՝ հայկական մշակույթի օջախ (Հայկական գրատպության 500-ամյակին նվիրված միջազգային գիտական կոնֆերանսի զեկուցումներ), Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2014, Феномен Шуши: историко-политическое исследование (коллективная монография). См.: «Рабочие тетради», приложение к военно-научному журналу «Айкакан банак» института национальных

բ) բավական տարողունակ է քաղաքական չափումը: Աներկբա կարևորվում է այն քաղաքական զարգացումների իմաստավորումը, որոնք նախորդել և հաջորդել են Շուշիի ազատագրմանը: Մասնավորապես, պետք է դիտարկել հետևյալ տեսանկյունները.

- արտաքաղաքական;
- ներքաղաքական:

Արտաքաղաքական հարթությունում պետք է դիտարկել այսպես կոչված Ադրբեջանի և Արցախի Հանրապետության հակամարտությունում իրենց շահերը հետապնդող երկրների հակասությունները, դրանց հնարավոր ազդեցությունը հակամարտող կողմերի ուժերի հարաբերակցության ու քաղաքական ուղեգծի վրա, Շուշիի ազատագրման հետևանքները տարածաշրջանային գործընթացների ու զարգացումների համար և այլն¹:

Ներքաղաքական հարթությունում դիտարկելի է Շուշիի ազատագրման գաղափարի շուրջ համայն հայ ժողովրդի համախմբման հնարավորությունը, ինչի մասնակի իրականացումը, թերևս, հաղթանակի գրավականներից մեկն էր:

գ) ռազմական չափումը: Ռազմական անվտանգության, հակառակորդի վտանգավոր կրակակետերի ու ռազմահենադաշտերի վնասազերծման անհրաժեշտությունից բխող գործողությունների պատճառահետևանքային կապի ներկայացումը նպատակաուղղված պետք է լինի դրանց նշանակության բացահատմանը ոչ միայն Արցախի հայ ազգաբնակչության ֆիզիկական գոյության ապահովման, այլ նաև մեզ պարտադրված պատերազմում նախաձեռնությունը վերցնելու համար²:

դ) հումանիտար աղետի կանխումը³:

Շուշիում հակառակորդի ծավալած կրակակետերից ու ռազմահենադաշտից Արցախի մայրաքաղաքի և շրջակա հայկական խաղաղ բնակավայրերի մշտական հրթիռահրետակոծումները հումանիտար աղետի էին հասցրել տասնյակ հազարավոր մարդկանց, հիմնականում՝ ծեղերի, կանանց ու երեխաների... Հումանիտար աղետի արտահայտություններից էին.

դ.ա) Արցախի Հանրապետության շրջափակումը և Ստեփանակերտ մայրաքաղաքի պաշարումը;

դ.բ) Սովը, համաճարակները, հարկադիր նկուղային կյանքը;

դ.գ) Ջրագծի, էլեկտրականության և գազամատակարարման խափանումը;

դ.դ) Ստեփանակերտի սիստեմատիկ ոչնչացման անսքող նպատակը (հրթիռային-հրետանային թիրախավորված հարվածներ, հետևակային հարձակումներ): Դրա անհերքելի վկայություններն են Ստեփանակերտի դաժան հրթիռահրետակոծությունների խիտ ժամանակագրությունը և Շուշիի ազատագրումից հետո Ղազանչեցոց ս. Ամենափրկիչ եկեղեցում և բերդաքաղաքի բազմաթիվ շենքերի նկուղներում հայտնաբերված հազարավոր հրթիռներն ու արկերը, որոնք նախատեսված էին Արցախի մայրաքաղաքը ու շրջակա հայկական բնակավայրերը դաժանաբար հողին հավասարեցնելու համար:

стратегических исследований имени Драстамата Канаяна МО Республики Армения, 1-2(25-26), 2013, Ռազմավարական անվտանգային հետազոտություններ (Խմբ. խորհուրդ), հատոր 4, Երևան, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԲ, 2014 և այլն:

¹ Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994, հանրագիտարան մեկ հատորով, Երևան, ՀՀ, 2004, Ղարաբաղյան հակամարտության արտաքին քաղաքական ասպեկտները: Վերլուծական նյութեր, թող. 3, Երևան, Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, 2009, **Բալայան Տ.**, Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994, Երևան, «Գասպրինտ», 2004, **Դեմոյան Դ.**, Турция и Карабахский конфликт в конце XX – начала XXI веков. Историко-сравнительный анализ, Ереван, Авторское издание, 2006, **Захаров В., Арешев А.**, Сотрудничество Азербайджана с НАТО и ситуация в Нагорном Карабахе: этапы, намерения, результаты. Научное издание, Москва, «Русская панорама», 2008, **Рябцев В., Сафарян С.**, «Карабахский узел»: этнонациональный конфликт в аспекте региональной геополитики, Ростов-на-Дону, Изд.-во Северо-Кавказского научного центра высшей школы, 1996, **Chorbajian L., Donabedian P., Mutafian C.** (eds), The Caucasus Knot: The History and Geopolitics of Nagorno-Karabakh, London, Zed Books, 1994 և այլն:

² Տես **Հարությունյան Մ.**, Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, էջ 85-86, 91-93:

³ Տես **Հարությունյան Մ.**, Շուշիի ազատագրումը.-«Ազատ Արցախ», հմ. 53-54, 8 մայիսի 1999 թ., էջ 3-4, **Նույնի**, Շուշիի ազատագրման պատմական նշանակությունը.- «Հայրենյաց պաշտպան», ապրիլ-մայիս, 2002 թ., հմ. 12-13, էջ 6, **Նույնի**, Շուշիի ազատագրումը՝ ԼՂՀ անկախության գրավական.- «Ազատ Արցախ», հմ. 54, 9 մայիս 2002 թ., էջ 12-13, **Նույնի**, Շուշի բերդաքաղաքի ազատագրման և պաշտպանության բանակի կազմավորման ռազմաքաղաքական ու պատմական մի քանի տեսանկյունների մասին (Շուշիի ազատագրման և Պաշտպանության բանակի 20-ամյա հորեյանների առթիվ).- «Մարտիկ», հմ. 17-18, 5 -12 մայիս, 2012 թ., էջ 6-12 և այլն:

Սկզբունքորեն կարևորվում են Շուշիի ազատագրման պլանավորման և ղեկավարման հիմնահարցերը: Մեր համոզմամբ՝ ելակետ պետք է ընդունել հետևյալ դրույթները.

ա) Պլանավորումն իրականացվել է Արցախի ինքնապաշտպանության ուժերի շտաբում՝ գնդապետ Արկադի Տեր-Թադևոսյանի ղեկավարությամբ: Պլանավորմանն ակտիվորեն մասնակցել և ռազմագործողությունն իրագործել են չորս ուղղությունների ու անմիջապես մասնակից ջոկատների հրամանատարները:

բ) Հայաստանի Հանրապետության և նրա զինված ուժերի մասնակցության շուրջ քաղաքական շահարկումներն անընդունելի են և սպառնում են թուլացնել հայկական կողմի դիրքերը տեղեկությային պատերազմում¹:

գ) Այս տեսակետից կարևորվում է մայր Հայաստանից ժամանած կամավորական խմբերի դերը: ՀՀ-ից ու Սփյուռքից մեր հայրենակիցները կամավոր հիմունքներով օգնության են հասել արցախցի եղբայրներին ու քույրերին, որպեսզի նպաստեն նրանց անվտանգության և տարրական իրավունքների պաշտպանության սուրբ գործին:

դ) «Դնեպրիկ» հրետանային մարտկոցի դերի գերազնահատումը² վտանգում է Շուշիի ազատագրման, ապա ներկայիս Բերձորի վրայով մայր Հայաստանի հետ ցամաքային կապի վերականգման գործողություններին ՀՀ-ի անմիջական մասնակցության անհիմն մեղադրանքների հերքման արդյունավետությունը:

Կարևոր է Շուշիի ազատագրման մասնակիցների թվի ճշգրտման հարցը: Շուշիի ազատագրման համար մեղալով պարզատրվածների անհամաչափ թիվը, ինքնակոչների աննախադեպ քանակի տարեցտարի ուռճացումը սպառնում են արժեզրկել համազգային կարևոր հաղթանակը:

Մինչև 1999 թ. ընդունված էր Շուշիի գրոհի մասնակիցների 1200 թիվը: Տարիների ընթացքում մեզ հաջողվել է հավաքել Շուշիի ազատագրմանը մասնակցած ջոկատների ցուցակները, որոնց համադրումը և հանրագումարը ցույց է տվել, որ հարձակման առաջին փուլում մասնակիցների թիվը չի անցնում 1200-ից: Ներկայում աշխատանքներ ենք տանում անհատապես յուրաքանչյուրի մասնակցության ու դերի ճշգրտման ուղղությամբ:

Մասնակիցների թվի կրկնապատկումը հետևանք է Շուշիի ազատագրման ռազմագործողության երկրորդ փուլում պահեստագորային ուժերի ներգրավման, որի անհրաժեշտությունն առաջացել էր մայիսի 8-ի ետմիջօրեին ԻՊՈՒ 422 համարի տանկի խոցումից ու հարձակման թափը կորցնելուց հետո ճակատում առաջացած անսպասելի դադարի ու անորոշ վիճակի պայմաններում:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները՝ բազմաթիվ ջոկատներ ու խմբեր իրենց խնդիրը չեն կատարել: Օրինակ, Լաչինի ուղղությունում գործելու կոչված խմբավորումը, որի մեջ մտնում էին Ժ. Սեֆիլյանի հրամանատարությամբ ՀՅԴ վաշտը և այլ ջոկատներ, նրանց ուղեկցող Վալերի Բալայանի վկայությամբ՝ մոլորվել է անտառներում և առաջադրված խնդիրը, փաստորեն, չի կատարել: Հաճախ խոսք է գնում նաև այնպիսի ջոկատների մասին, որոնց մասնակցությունը ևս խիստ կասկածելի է³:

Ինչպես արձանագրված է մի վավերագրում՝ իր խնդիրը չի կատարել նաև Տումիի ջոկատը⁴:

Ռազմագործողության մասնակիցների թվի առումով որոշ հեղինակներ հակասում են իրենք իրենց, մի տեղ, հենվելով Ա. Տեր-Թադևոսյանի վկայության վրա՝ նշելով 1700⁵, իսկ մի այլ տեղ՝ 775⁶, այդպես էլ չմտցնելով հստակություն: Ի դեպ, վերջինը ոչ թե ռազմագործողությանը բոլոր

¹ *Հարությունյան Մ.*, ԼՂՀ զինված ուժերի շինարարության լուսաբանումը և տեղեկությային անվտանգությունը.- «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» թեմայով Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի գեկուցումների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, էջ 120:

² *Բաղդասարյան Ք.*, Դիմակայություն (հուշագրություններ), «Մխիթար Գոշ», Երևան, 1998, «Հեղինակային հրատ.», 2010, էջ էջ 118-120(171-178), 157(229), 162(236) և այլն:

³ Տես *Կարապետյան Արկադի, Հարությունյան Մհեր*, Երբ խեղաթուրվում են փաստերը («Հայ զինվորի» մի հրապարակման առթիվ).- «Հայրենյաց պաշտպան», հմ. 16-17, օգոստոս-սեպտեմբեր, 2002 թ., էջ 19-20:

⁴ ԱՀ ՊՆ արխիվ, Рабочая тетрадь оперативного дежурного. Нач. 14 марта - оконч. 5 июня 1992 г. По книге учета РТ N 142, 94 л.

⁵ Տես *Աբրահամյան Հ.*, Մարտնչող Արցախը 1917-2000: Գիրք Գ (1985-2000), Ստ., 2007, էջ 357:

⁶ Տես նույն տեղում, էջ 368, ծան. 37:

մասնակիցների թիվն է, ինչպես կարծում են որոշ պատմաբաններ¹, այլ ԼՂՀ ԳԽ-ին ցուցակով պարզևատրման ներկայացվածների²:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունների և հաշվումների արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ Շուշիի ազատագրման և Ստեփանակերտին հարակից կրակակետերի վնասագերծման ռազմագործողությունում զոհվել է 47 և վիրավորվել շուրջ 8 տասնյակ ազատամարտիկ³: Իսկ հակառակորդի մարդկային կորուստները քառակի շատ էին⁴:

Քաղաքական շահարկումների թիրախում է հայտնվել նաև հարձակման գլխավոր ուղղության հարցը⁵: Որոշ հրատարակություններում այս առումով նկատելի են անհարկի վերագրումներ՝ պատմական փաստերի անտեսմամբ: Մասնավորապես, Շուշիի ազատագրման գլխավոր ուղղություն է ներկայացվել Սամվել Բաբայանի ղեկավարած Լաչինի (հարավային) ուղղությունը⁶, ինչը չի համապատասխանում թե Շուշիի ազատագրման հրամանի և թե «Հրազդան», «Հարսանիք լեռներում» կողային անվանումներով հայտնի քարտեզների տվյալներին: Այդ վարկածի օգտին չի խոսում նաև ռազմագործողության ընթացքի վերլուծությունը, թեև, ինչ խոսք, Լաչինի (հարավային) ուղղությունում հարձակման անցած ԲՊՈՒ ստորաբաժանումներն իրենց ուրույն դերն են խաղացել ադրբեջանական կայագրի դուրսմղման գործում⁷:

Որոշ հեղինակներ, մեր կողմից սպառիչ պարզաբանումներով հանդերձ, շարունակում են նույնացնել Շուշիի ազատագրման ու Լաչինի ռազմագործողությունները⁸: Անհերքելի փաստ է, որ

¹ *Աբրահամյան Հ.*, նշվ. գիրքը, էջ 357, *Բալայան Վ.*, Շուշի. տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Եր., «Զանգակ», 2017, էջ 480:

² *Հարությունյան Մ.*, Վերստին Շուշիի ազատագրման պատմագրության հիմնահարցերի մասին (Շուշիի ազատագրման 15-ամյակի առթիվ).- «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 1, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2008, էջ 150:

³ *Հարությունյան Մ. Ա.*, Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ.- «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 5(59-70), 2011, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2015, էջ 81:

⁴ «Ղարաբաղի ձայն» ադրբեջանական ռուսալեզու թերթում մի օրն Գ. Զեյնալօղլու, կրկնելով վաղուց տարփողվող հերյուրանքներն ու նենգափոխումները, որոշ տվյալներ է ներկայացրել, որոնք, թերևս, արտացոլում են հակառակորդի ճամբարում շրջանառվող տեսակետները: Այսպես կոչված Ադրբեջանի միգրանտների և հարկադիր վերաբնակիչների իրավունքների պաշտպանության ՀԿ-ի պաշտոնաթերթի հոդվածագրը պնդում է, թե ներկայիս Քաշաթաղի շրջանի 65507 բնակիչ 1992 թ. մայիսի 18-ից հետո իբր վերաբնակեցվել է այլ բնակավայրերում, հակառակ նրան, որ նույն նախադասության սկզբում նշել էր, որ հիշյալ շրջանի բնակչության թիվը 63 հազար էր: Նույն հեղինակը բերել է նաև Շուշիի ազատագրման ռազմագործողության ընթացքում ադրբեջանական կողմի կորուստները. սպանված՝ 480, վիրավոր՝ 600 զինվորականների ու բնակչության թվից, որոնցից 150-ը դարձել են հաշմանդամ, 68 մարդ գերի է հանձնվել կամ անհայտ կորել է, 25 հազ. մարդ դարձել են հարկադիր վերաբնակիչներ... («Толос Карабах», ном. 5(112), май 2014 г., с. 5. տես նաև URL:<http://www.azerbaijanfoundation.az> [վերջին դիտում՝ 14. 04. 2015 թ.]): Անկասկած, այս թվերը անվստահելի են: Հայտնի է, որ Շուշիի շրջանում 1988-1992 թթ. վերաբնակված և նախկին ադրբեջանցիների ընդհանուր թիվը չի անցել 15 հազ., ուրեմն մնացած 10 հազարն այսպես կոչված Ադրբեջանի օկուպացիոն զորամասերի անձնակազմի թիվն է: Մեր տվյալներով՝ թշնամին Շուշիի ազատագրման ռազմագործողությունում անմիջապես քաղաքի ուղղությունում կորցրել է մոտ 200 մարդ... Անհավանական չէ, որ հակառակորդի կենդանի ուժի կորուստների 480 թիվը համապատասխանում է իրականությանը...

⁵ Պատմաբան Հ. Աբրահամյանի կարծիքով՝ եղել են «գլխավոր ուղղություններ» (Տես *Աբրահամյան Հ.*, նշվ. գիրքը, էջ 358), ինչը թյուրիմացություն պետք է համարել:

⁶ Տես Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994: Հանրագիտարան 1 հատորով (Հայկ. հանրագիտարանի հրատ. գիտախմբագր. հանձնաժողով՝ Հ. Մ. Այվազյան (գլխ. խմբագիր-տնօրեն), Զ. Հ. Բալայան (նախագահ), Հ. Մ. Խաչատրյան (գլխ. խմբագրի և նախագահի տեղակալ, հատորի պատասխ.) և ուրիշներ), Երևան, 2004, էջ 103, *Խաչատրյան Հ., Ղազարյան Գ., Մարգարյան Մ.*, Հաղթանակներն՝ ինչպես եղել են. ազդական 44, Երևան, Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, «Անտարես», 2008, էջ 36:

⁷ Այդ մասին ավելի հանգամանալից տես *Հարությունյան Մ.*, Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, էջ 107-113: Ի դեպ, այդ նույն հանրագիտարանում մեր հեղինակած «Շուշիի ազատագրումը» հոդվածում ևս Լաչինի (հարավային) ուղղությունը գլխավոր չի (և չի էլ կարող) դիտարկվել. տես Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994: Հանրագիտարան, էջ 553:

⁸ Տես *Թաղևոսյան Ռ.*, Դրվագներ հայոց ռազմական պատմությունից: XIX-XX դարեր, Եր., «Զանգակ», 2012:

ինչպես Շուշիի ազատագրման մարտական հրամանում, այնպես էլ պլանավորման քարտեզներում նման խնդիր չի դրվել¹: Հետևաբար, վերոնշյալ փորձերը ոչ միայն հակասում են պատմական ճշմարտությանը, այլև սխալ են քաղաքականապես, քանի որ կարող են մեր հակառակորդներին հայկական կողմին նվաճողական նկրտումների մեջ մեղադրելու «ապացույցներ» տալ: Մինչդեռ, իրականությունն այն է, որ Շուշիի ու Ստեփանակերտին հարակից կրակակետերը ճնշելուց, ապա ադրբեջանական զավթիչների հարձակումները հետ մղելուց հետո, Արցախի ԻՊՈՒ-ն հարկադրված էր զարգացնել հակահարձակողական գործողությունները հակառակորդի հրթիռահրետանային գրոհները կասեցնելու և մեծաքանակ ուժերի կուտակումները կանխելու նպատակով: Հենց պատերազմական գործողությունների տրամաբանությունը, ապա և մարտավարական ու ռազմավարական շարժառիթները ստիպեցին Արցախի ԻՊՈՒ-ին ճեղքել հանրապետության գրեթե քառամյա շրջափակումը և անմիջական ցամաքային կապ հաստատել մայր Հայաստանի հետ՝ ապահովելով թիկունքը: Իրականությունը խեղաթյուրելով՝ որոշ հեղինակներ, ընդհակառակը, ամեն ինչ անում են, ապացուցելու համար, թե, իբր, Հայաստանի Հանրապետությունն է իրականացրել Շուշիի ազատագրման և ապա Լաչինի միջանցքի բացման ռազմագործողությունները²: Սա շատ վտանգավոր թեգ է, որն ուղղակի փնտրված գյուտ կարող է լինել ադրբեջանական քարոզամեթոդային համար:

Հեղինակների մեծամասնությունը, կենտրոնանալով Շուշիի ազատագրման և մայրաքաղաքին հարակից կրակակետերի վնասազերծման վրա, հանիրավի անտեսում է Ասկերանի, Մարտակերտի, Հադրութի շրջանների ճակատներում հակառակորդի հարձակումների հետմղման նշանակությունը Շուշիի հաղթանակի ամրապնդման համար:

Սկզբունքային կարևորություն ունի համարժեք վերաբերմունք արտահայտելը Շուշիում մղված մարտերի փաստի վիճարկմանը՝ ակնհայտ քաղաքական նկատառումներով: Այդ տեսակետը շրջանառել են Դ. Բաղդասարյանը և երկրորդ փուլում կամ արդեն Շուշիի ազատագրումից հետո բերդաքաղաք այցելած խմբերի որոշ մարտիկներ, որոնք, սակայն, չեն քաշվում իրենց Շուշիի ազատագրման մասնակից ներկայացնելուց:

Ցավոք, այսքանով սխալներն ու վրիպակները չեն վերջանում, թեև պարբերաբար անդրադառնում ենք դրանց և հատկանշում շտկելու անհրաժեշտությունը: Դրա պատճառը նախորդ հեղինակների աշխատությունների ուսումնասիրմանը, պատմագրության նվաճումներին մակերեսայնորեն մոտենալու, նյութին ակնհայտորեն չտիրապետելու, բայցևայնպես՝ տվյալ նյութի մասին գիրք կամ հոդված «գրելու» արատավոր պրակտիկան է:

Ընդհանրացնելով՝ փաստենք, որ դեռևս լուրջ անելիքներ կան պլանավորման քարտեզների, հարվածի գլխավոր ուղղության, կողմերի կորուստների, մասնակիցների թվի և Շուշիի ազատագրման պատմագրության այլ հիմնահարցերի պարզաբանման ոլորտում: Դրանց մի մասին (ինչպես օրինակ՝ Շուշիի և Լաչինի ռազմագործողությունների նույնացման հարցին, Շուշին հեշտ ազատագրելու կամ «դավաճանության» մասին ադրբեջանական հերյուրանքներին, մասնակիցների ու երկու կողմերի ուժերի հարաբերակցությանը և հարակից այլ հարցերի) մենք ժամանակին անդրադարձել ենք, սակայն նոր ուսումնասիրությունները և նորահայտ տվյալները թույլ են տալիս դրանք ավելի ճշգրտել: Ինչպես նախկինում ենք նշել, օգտակար կարող է լինել մասնագետների ու ականատես կամ իրավասու բարձրաստիճան հրամանատարների մասնակցությամբ քննարկում կազմակերպելը, ինչը կարող է մեծապես նպաստել վիճահարույց շատ հարցերի պարզաբանմանն ու ճշգրտմանը, ինչը երկարատև ու մեղվաջան աշխատանք պահանջող գործընթաց է:

¹ Տե՛ս *Հարությունյան Մ.*, Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, էջ 9-10:

² Տե՛ս *Араслы Дж.*, Армяно-азербайджанский конфликт(военный аспект), Баку, «Эргюн», 1995, с. 22-23, *Гасанов А.*, Современные международные отношения и внешняя политика Азербайджана (Второе издание, дополненное), Баку, «Zardabi LTD» MMC, 2013, с. 983, *Աբրահամյան Հ.*, Մարտնչող Արցախը 1917-2000: Գիրք Գ (1985-2000), էջ 353-357: